ԱՄԵՆՕՐՅԱ ԱՂՈԹԱԳԻՐՔ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2011

ՕՐՀՆՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Քրիստոսի Տիեզերական Եկեղեցու բոլոր զավակների հետ միասնաբար այսօր՝ նոր հազարամյակի արշալույսին, աղոթենք առ Միածին Փրկիչը և հայցենք. «Լսելի՛ արա մեզ, Տէ՛ր, զձայն աւետարանի հրեշտակին...» և Հոյսով, Հավատով ու Սիրով պսակյալ Քո Հաղորության լույս խորհուրդը հաստատիր մեր հոգիներում:

Գարեգին Բ
Կաթողիկոս Ամենայն Հայոց

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

Օրհնյալ Տեր մեր Հիսուս Քրիստոս. ամեն:

Հայր մեր, որ երկնքում ես,
Սուրբ թող լինի քո անունը,
Քո թագավորությունը թող գա.
Քո կամքը թող լինի երկրի վրա,
ինչպես որ երկնքում է:
Մեր հանապազօրյա հացը
տո՛ւր մեզ այսօր.
և ներիր մեզ մեր հանցանքները,
ինչպես որ մենք ենք ներում նրանց,
որ հանցանք են գործում մեր դեմ.
և մի տար մեզ փորձության,
այլ փրկի՛ր մեզ չարից,
որովհետև քոնն է թագավորությունը
և զորությունը
և փառքը հավիտյանս.
ամեն:

ՀՐԱԺԱՐԻՄՔ

Հրաժարվում ենք սատանայից և նրա բոլոր տեսակի խաբեություններից, նրա պատրանքներից, խորհուրդներից, ճանապարհներից, նրա չար կամքից, չար հրեշտակներից, չար գործակիցներից, նրա չար կամքը կատարողներից և նրա ամբողջ չար զորությունից հրաժարելով հրաժարվում ենք:

ՀԱՎԱՏԱՄՔ

Հավատում ենք մեկ Աստծուն, Ամենակալ Հորը, Արարչին երկնքի և երկրի, տեսանելիների և անտեսանելիների:

Եվ մեկ Տեր Հիսուս Քրիստոսի, Աստծու Որդուն, ծնված Հայր Աստծուց. Միածին, այսինքն՝ Հոր էությունից:

Աստված՝ Աստծուց, լույս՝ լույսից, ճշմարիտ Աստված՝ ճշմարիտ Աստծուց, ծնունդ և ոչ արարած, նույն ինքը Հոր բնությունից, որով եղավ ամեն ինչ երկնքում և երկրի վրա՝ տեսանելիներ և անտեսանելիներ:

Որ մեզ՝ մարդկանց համար և մեր փրկության համար, իջավ երկնքից՝ մարմնացավ, մարդացավ, կատարելապես Սուրբ Հոգով ծնվեց Սուրբ Կույս Մարիամից, որի միջոցով առավ մարմին, հոգի և միտք և այն ամենը ինչ կա մարդու մեջ, ճշմարտապես և ո՛չ կարծեցյալ:

Զարչարվեց, խաչվեց, թաղվեց, երրորդ օրը հարություն առավ, նույն մարմնով բարձրացավ երկինք և նստեց Հոր աջ կողմում:

Պիտի գա նույն մարմնով և Հոր փառքով՝ դատելու կենդանիներին և մեռածներին, որի թագավորությունը վախճան չունի:

Հավատում ենք նաև Սուրբ Հոգուն, անստեղծ և կատարյալ, որ խոսեց Օրենքի, մարգարեների և Ավետարանների մեջ:

Որն իջավ Հորդանան (գետում) քարոզեց առաքյալներին և բնակվեց սուրբերի մեջ:

Հավատում ենք Միակ Ընդհանրական և Առաքելական Սուրբ Եկեղեցուն: Մեկ մկրտության, ապաշխարության, մեղքերի քավության և թողության, մեռելների հարության, հոգիների և մարմինների հավիտենական դատաստանին, Երկնքի թագավորության և հավիտենական կյանքին:

ԱՌԱՎՈՏՅԱՆ ԱՂՈԹՔ

Տե՛ր, եթե շրթներս բացես, բերանն իմ կերգի օրհնությունը քո (Սաղմոս 50, 17):

Գոհանում եմ Քեզանից, ո՜վ Տեր իմ և Աստված իմ, և օրհնում ու փառավորում Քո սուրբ անունը, որ պահեցիր այս գիշեր Քո անարժան ու մեղավոր ծառային բոլոր վտանգներից ու փորձություններից՝ խաղաղությամբ հասցնելով առավոտյան այս ժամին: Եւ արժանացրիր տեսնելու Քո ողորմության լույսը: Ամեն:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՂՈԹՔ

Ո՛վ մեծ Աստված, որ տվել ես մեզ բարի հայր և սիրող մայր, տո՛ւր մեզ շնորհք, անենք աղոթք, չլինենք անհոգ, ապրենք խելոք, պարկեշտ ու հեզ ու սիրենք Քեզ: Ամեն:

ԳՈՐԾ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ուղղի՛ր մեր ձեռքի գործերը, Տե՛ր, մեր ձեռքի գործերը հաջողեցրո՛ւ մեզ: Ամեն:

ԴԱՍ ՍԿՍԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Հոր իմաստություն՝ Հիսուս,
Տո՛ւր ինձ իմաստություն,
Որ ամեն ժամ Քո առաջ
Խորհեմ, խոսեմ և գործեմ բարին
Եվ փրկիր ինձ
Չար խոհերից, խոսքերից և գործերից.
Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

ՆԵՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԻՆ

Օգնի՛ր մեզ, Տե՛ր, օգնի՛ր մեզ, մեր փրկիչ Աստվա՛ծ, Քո մեծ և փառավոր անվան համար. Տե՛ր, փրկի՛ր մեզ և քավի՛ր մեր մեղքերը Քո սուրբ անվան

համար: Պարսպյալ պահի՛ր Քեզ ապա-
վինած և հուսացած ժողովրդին սուրբ
և պատվական խաչի հովանու ներ-
քո՝ խաղաղությամբ: Փրկի՛ր երևելի և
աներևույթ թշնամուց: Արժանի արա
գոհությամբ փառավորել Քեզ՝ Հոր և
Սուրբ Հոգու հետ, այժմ և միշտ և հա-
վիտյանս հավիտենից. ամեն:

ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՏԱՆԳԻ ԴԵՊՔՈՒՄ

Խնամող արարածների,
Խաչիդ նշանով
Պահպանի՛ր հոգիս և մարմինս
Մեղքերի պատրանքներից,
Դևերի փորձություններից,
Անիրավ մարդկանցից
Եվ բոլոր վտանգներից հոգու
և մարմնի,

Եվ ողորմի՛ր Քո արարածներին
Եվ ինձ՝ բազմամեղիս:

ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Ե՛կ, Տեր, ի տեսություն իմ հիվան-
դացյալ հոգուն, դի՛ր Քո ձեռքը
իմ վրա և բժշկի՛ր՝ ասելով. «Զորացի՛ր,
վերցրո՛ւ քո մահիճը և գնա՛ կյանքի
արդարության ճանապարհով». ամեն:

Տե՛ր Աստված մեր, Քո ժողովրդից
փարատի՛ր ցավերը և բժշկի՛ր հիվան-
դությունները, և շնորհի՛ր բոլորին
կատարյալ առողջություն Քո ամենա-
հաղթ խաչի նշանով, որով մարդկանց
տկարությունները Քո վրա վերցրիր և
դատապարտեցիր կյանքի ու փրկութ-
յան թշնամուն:

Դու ես մեր կյանքը և փրկությունը,
բարերար և բազումողո՛րմ Աստված, և

միա՛յն Դու ես կարող մեր մեղքերը նե-
րել և մեր ցավերն ու հիվանդություն-
ները վանել մեզանից, որովհետև Քեզ
հայտնի են մեր կարիքները:

Բարիքների պարգևող, պարգևի՛ր Քո
առատ ողորմությունները Քո արարած-
ներին՝ յուրաքանչյուրի կարիքների
համաձայն, որոնք միշտ փառավորում
և օրհնաբանում են Քեզ՝ Ամենասուրբ
Երրորդություն, այժմ և միշտ և հա-
վիտյանս հավիտենից. ամեն:

ԱՊԱՎԻՆՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻՆ

Քո խաչը թող մեզ ապավեն լինի,
Տե՛ր Հիսուս, երբ որ երևաս Հոր
փառքով՝ լուսավոր ամպերի մեջ, այն
ժամանակ մենք չամաչենք՝ քե՛զ հու-
սացողներս, այլ քո մեծ զորությամբ
ուրախանանք քո աջ կողմում՝ իբրև
լույսի և ցերեկի որդիներ:

ՀԱՅ ՈՒՏԵԼՈՒՅ ԱՌԱՋ

Չաշակենք խաղաղությամբ այս կե-
րակուրները, որոնք մեզ համար
պատրաստված են Տիրոջ կողմից: Օրհն-
յա՛լ է Տերն Իր պարգևներում: Ամեն:

***

Օրհնյալ ես, ո՛վ Տեր Աստված մեր,
որ կերակրում ես մեզ մանկությունից
սկսած և կերակուր ես շնորհում բոլոր
մարմնավորներին: Մեր սրտերն ու-
րախությամբ ու բերկրանքո՛վ լցրու,
որպեսզի լիանանք՝ բազմապատկելու
բարի գործերն ի Հիսուս Քրիստոս՝ ի
Տեր մեր: Որին վայել է փառք, իշխա-
նություն և պատիվ այժմ և միշտ և հա-
վիտյանս հավիտենից. ամեն:

ՃԱՇԻՑ ՀԵՏՈ

Փա՛ռք տիեզերքի կերակրողին, որ մեզ կերակրեց և լիացրեց: Նրան փառք հավիտյանս: Ամեն:

***

Փա՛ռք Քեզ, ո՛վ Տեր, փառք Քեզ, փառա՛ց Թագավոր, որ տվեցիր մեզ ուրախության կերակուր և Քո ամենաբավ ողորմության լիությամբ լցրիր մեր սրտերը: Այժմ լցրու մեզ նաև Քո Սուրբ Հոգով, որպեսզի Քո առաջ ընդունելի լինենք և ոչ՝ ամոթահար, քանզի Դու յուրաքանչյուրին հատուցում ես ըստ իր գործերի: Ամեն:

ՃԱՆԱՊԱՐՀ ԳՆԱԼՈՒՑ ԱՌԱՋ

Տե՛ր, ուղղի՛ր մեր ընթացքը խաղաղության ճանապարհներով. Տե՛ր, ուղղի՛ր և առաջնորդի՛ր մեր հոգինե-

ը և բոլոր հավատացյալներին գնալ արդարության ճանապարհով դեպի հավիտենական կյանք: Ամեն:

***

Տե՛ր, երբ ճանապարհ ընկնեմ, ինձ մի՛ թող մենակ, այլ առաքի՛ր իմ առջևից Քո օգնականությունը՝ օր ու գիշեր պահելով ինձ սատանայի բոլոր փորձություններից, և իմ անկայուն մտքին մի՛ թող մեղանչել, այլ լալ ու սգալ իմ մեղքերի համար: Ամեն:

ԵԿԵՂԵՑԻ ՄՏՆԵԼԻՍ

Տաճա՛ր Աստծո և բնակարա՛ն Սուրբ Հոգու, որ քեզանից՝ սուրբ Ավազանով, կանչեց որդեգրվելու երկնավոր Հորը: Այսօր քո մեջ կամեցավ պատարագվել անարատ Գառը: Եվ ես եկա Քո դռների առաջ և աղաչում եմ

Քեզ. մաքրի՛ր ինձ վերստին լվացմամբ և սրբի՛ր մեղքերից և արժանի արա՛ մտնելու սուրբ Սեղանիդ առաջ երկրպագելու: Ամեն:

ՈՒԽՏԱՎՈՐԻ ԱՂՈԹՔ

Բարերար և բազումողո՛րմ Աստված, Քո առաջ ընկած աղաչում ենք ամբողջ սրտով և գթություն խնդրում Քեզանից: Ինչպես խոստացար ծառաներիդ և ասացիր՝ այն ամենն, ինչ Հորից հավատով խնդրեք հանուն Որդու, կարվի ձեզ, շնորհի՛ր և այժմ հավատացյալներիս և կատարի՛ր մեր խնդրանքները, քանզի Քեզ ենք ապավինել: Եվ Քո առատ ողորմությամբ մխիթարի՛ր մեզ այս կյանքում և առաջնորդելով հասցրու երկնքի անճառ արքայությունդ՝ ի փառաբանություն և ի պատիվ ամենասուրբ Երրորդությանդ, այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ՈՒԽՏԱՎԱՅՐՈՒՄ ԱՍՎՈՂ ԱՂՈԹՔ

Շնորհակալությի՛ւն Քեզ, ո՛վ Տեր, որ ինձ առաջնորդեցիր և ողջ-առողջ հասցրիր այստեղ և արժանի դարձրիր Քո ներկայությունը վայելելու: Ընդունի՛ր ինձ, Տե՛ր: Ընդունիր նաև սրտիցս ու հոգուցս բխող մաղթանքները, եթե նրանք ամենագետ Արարչիդ կամքի համաձայն են: Շնորհի՛ր, որ ամբողջ կյանքս, խոսքերս ու գործերս Քեզ ընծայված անուշահոտ խունկ և ընդունելի հոգևոր ընծաներ լինեն, որպեսզի իմ խոնարհ կյանքով երգաբանողն ու փառաբանողը դառնամ Քո սուրբ անվան՝ այժմ և հավիտյանս հավիտենից: Ամեն:

ԵԿԵՂԵՑՈՒՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԻՍ

Աղաղո՛ր երկնավոր, Քո եկեղեցին անշա՛րժ պահիր և Քո անվան երկրպագողներին պահի՛ր խաղաղության մեջ: Ամեն:

Տե՛ր Աստված մեր, ապրեցրո՛ւ քո այս ժողովրդին և օրհնի՛ր Քո այս ժառանգներին, Քո Եկեղեցու միասնությունը պահպանի՛ր, մաքրի՛ր նրանց, ովքեր ողջունեցին սիրով Քո տան վայելչությունը: Դու մեզ փառավորի՛ր աստվածային Քո զորությամբ և մի՛ լքիր նրանց, ովքեր հուսացել են Քեզ: Ամեն:

ՔՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ողորի պահապան Քրիստոս. Թող Քո Աչքը հովանի լինի ինձ վրա. գիշեր և ցերեկ, տանը նստելիս, ճամփա գնալիս, քնած թե արթուն, որպեսզի երբեք չսասանվեմ. և ողորմի՛ր Քո արարածներին և ինձ՝ բազմամեղիս: Ամեն:

***

Տե՛ր իմ Աստված, Տե՛ր բարերար, Դու պահպանի՛ր ինձ այս գիշեր. տո՛ւր հորս ու մորս կյանք երկար և երջանիկ հանգիստ օրեր:

Քո սուրբը հրեշտակը մեր մոտից թող չհեռանա ամենևին, այլ մեզ պահի փորձանքներից ու արթնացնի զվարթագին: Ամեն:

ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔ

(Սաղմոս 6)

Տե՛ր, զայրույթով քո մի՛ հանդիմանիր ինձ և քո բարկությամբ ինձ մի՛ խրատիր:

Ողորմի՛ր ինձ, Տե՛ր, քանզի հիվանդ եմ ես, բժշկի՛ր ինձ, քանզի ոսկորներս խախտվել են:

Անձն իմ հույժ խռոված է, և դու, Տե՛ր, մինչև ե՞րբ:

Դարձի՛ր, Տե՛ր, փրկի՛ր ինձ, ազատի՛ր ինձ, Տե՛ր, քո ողորմությամբ, քանզի չկա մեկը, որ մահվան մեջ հիշի քեզ, կամ դժոխքում գոհանա քեզանից:

Ես հոգնեցի իմ հառաչանքներից, ամեն գիշեր հեծեծանքով լվացի մահիճն իմ և իմ արտասուքով անկողինս թրջեցի:

Սրտնեղությունից այլայլվեց աչքն իմ, ես հյուծվեցի բոլոր թշնամիներիս ձեռքից:

Հեռացե՛ք ինձնից ամենքդ, որ անօրենություն եք գործում:

Տերը լսեց իմ լացի ձայնը, Տերն ականջ դրեց իմ աղոթքներին, Տերն ընդունեց իմ խնդրանքները:

Բոլոր թշնամիներս թող ամաչեն ու խիստ խռովվեն, թող ետ դառնան և իսկույն խիստ ամաչեն ու զարհուրեն:

***

Բարերա՛ր Տեր, ողորմությամբդ նայի՛ր Քեզ երկրպագողիս և Քո սուրբ անունը փառաբանողիս: Տե՛ր զորությանց, հանդարտեցրո՛ւ մեզ սատանայական բոլոր խռովություններից և աշխարհիկ հոգսերից: Առաքի՛ր Քո խաղաղության հրեշտակին, որ մեզ անխռով պահի գիշեր ու ցերեկ, քնած և արթուն ժամանակ: Որպեսզի բարեպաշտությամբ և արժանավորապես Քեզ՝ Տիրոջդ ծառայելով այս կյանքում՝ ժամանենք երկնքի հավիտե-

նական արքայությունը, որ աշխարհի ստեղծման սկզբից պատրաստեցիր Քո սրբերի համար: Եվ նրանց հետ գոհանալով փառավորենք Հորը, Որդուն և Սուրբ Հոգուն այժմ և միշտ և հավիտյանս հավիտենից. ամեն:

ԱՂՈԹՔ ԸՆԴԴԵՄ ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (Սաղմոս 42)

Դատի՛ր ինձ, Աստվա՛ծ, և դատաստանիս ժամին արդարացրո՛ւ ինձ:

Անսուրբ ազգից, մեղսագործ ու նենգ մարդուց փրկի՛ր ինձ:

Դու ինձ ուժ տվողն ես, Աստվա՛ծ, ինչո՞ւ ինձ մոռացար, ինչո՞ւ տխուր լինեմ, երբ թշնամիս ինձ հալածի:

Առաքի՛ր, Տե՛ր, քո լույսն ու ճշմարտությունը, որ ինձ առաջնորդեն և հասցնեն քո սուրբը լեռն ու օթևանը:

Ես կմոտենամ Աստծու սեղանին, Աստծուն, որ երջանկացնում է իմ երիտասարդությունը:

Գոհություն կմատուցեմ քեզ օրհներգերով, Աստվա՛ծ, Աստվա՛ծ իմ:

Արդ, ինչո՞ւ ես տրտմում, հոգի՛ իմ, կամ ինչո՞ւ ես ինձ խռովեցնում, հույսդ դի՛ր Աստծու վրա, օրհներգի՛ր նրան, նա իմ փրկիչ Աստվածն է:

ԱՂՈԹՔ Ս. ԳՐՔԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԻՑ ԱՌԱՋ

Տե՛ր Հիսուս Քրիստոս, բա՛ց իմ սրտի աչքերն ու ականջները, որպեսզի լսեմ Քո կամքը: Հավատում եմ, Տեր, որ կլուսավորես իմ սիրտը, որովհետև Դու ողորմած Աստված ես: Եվ Քեզ փա՛ռք հավիտյանս: Ամեն:

ԱՂՈԹՔ Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒՅ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

Պարգևի՛չ ողորմության, պարգևի՛ր ինձ ուղղափառ հավատով, բարի գործերով և Քո սուրբ Մարմնի և Արյան հաղորդությամբ գալ Քեզ մոտ:

***

Գոհանում ենք Քեզնից, Քրիստոս Թագավո՛ր մեր, որ կենարար Մարմնովդ և սուրբ Արյունովդ մեզ կենդանություն պարգևեցիր: Ամեն:

Սաղմոս 22

Տերն իմ հովիվն է, և ինձ ոչինչ չի պակասի:

Դալար վայրերում նա ինձ բնակեցրեց և հանդարտ ջրերի մոտ ինձ սնուցեց:

Նա կենդանացրեց ինձ, հանուն իր անվան առաջնորդեց ինձ արդարության ճանապարհներով:

Եթե նույնիսկ անցնեմ մահվան ստվերների միջով, չեմ վախենա չարից, քանզի դու, Տե՛ր, ինձ հետ ես:

Քո ցուպն ու գավազանն ինձ կմխիթարեն:

Իմ առջև սեղան պատրաստեցիր՝ հալածիչներիս աչքերի դիմաց:

Գլուխս յուղով օծեցիր, և քո բաժակն ինձ արբեցրեց անխառն գինու պես:

Ողորմությունը քո, Տե՛ր, պիտի հետևի ինձ կյանքիս բոլոր օրերին, երկար օրեր ես Տիրոջ տանը պիտի բնակվեմ:

ԶՂՋՈՒՄՆ

Մեղայ Ամենասուրբ Երրորդութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Մեղուցեալ եմ Աստուծոյ: Խոստովանիմ առաջի Աստուծոյ և սրբուհւոյ Աստուածածնին և առաջի քո, հայր սուրբ, զամենայն մեղս, զոր գործեալ եմ: Քանզի մեղայ խորհրդով, բանիւ և գործով, կամայ և ակամայ, գիտութեամբ և անգիտութեամբ: Մեղայ Ասփուծոյ:

Մեղայ հոգւովս և զօրութեամբ սորա, մտօքս և շարժմամբ սորա, մարմնովս և զգայութեամբ սորա: Մեղայ զօրութեամբ հոգւոյս՝ խորամանկութեամբ, անզգամութեամբ, յանդգնութեամբ և երկչոտութեամբ, շռայլութեամբ և ժլատութեամբ, զեղխութեամբ և անիրաւութեամբ, չարահաւանութեամբ, յուսահատութեամբ և թերամտութեամբ: Մեղայ Ասփուծոյ:

Մեղայ չար խորհրդով մտացս՝ նենգութեամբ, ատելութեամբ, խեթիւ, մախանօք, յաչաղանօք, թուլութեամբ, պոռնկական խորհրդով՝ արուական, իգական, անասնական, գրաստական, գազանական, ի գիշերի և ի տուընջեան երազական գիջութեամբ և անրջական գարշ աղտեղութեամբ: Մեղայ Ասփուծոյ:

Մեղայ ցանկութեամբ մարմնոյս՝ հեշտութեամբ, պղերգութեամբ, յօրանջմամբ քնոյ, շարժութեամբ մարմնոյս և զգրագործութեամբ ի պէս-պէս ախտս, հեշտալրութեամբ լսելեացս, արատութեամբ աչացս, ցանկութեամբ սրտիս, իգութեամբ ռնգացս, պագչոտութեամբ բերանոյս, անժուժկալու-

թեամբ, շուայտութեամբ և արբեցութեամբ։ Մեղայ Աստուծոյ։

Մեղայ չարաբանութեամբ լեզուիս՝ ստախօսութեամբ, սուտ երդմամբ, երդմնազանցութեամբ, հակառակութեամբ, վիճաբանութեամբ, բանսարկութեամբ, շոգմոգութեամբ, քսու, դատարկաբանութեամբ և ծաղու, զրախօսութեամբ, հերձախօսութեամբ և անիծաբանութեամբ, տրտնջելով, դժգոհելով, բամբասելով և հայհոյելով։ Մեղայ Աստուծոյ։

Մեղայ գողութեամբ ձեռացս, ագահելով, զրկելով, հարկանելով, սպանանելով և ընդ գարշս ածելով։ Մեղայ Աստուծոյ։

Մեղայ ամենայն յօդուածովք շինուածոյս և ամենայն անդամօք մարմնոյս, հնգեակ զգայարանօքս և վեցեկի շարժմամբս՝ վերամբարձ ոտնահարութեամբ և վայրաքարշ մեղկութեամբ, յաջ և յահեակ խոտորելով, զառաջնոցն մեղանչելով և վերջնոցն չար նշաւակ գոլով։ Մեղայ Աստուծոյ։

Այլ և մեղայ եօթնիցս յանցանօք մահացու մեղօք՝ հպարտութեամբ և մասամբք նորին, նախանձու և մասամբք նորին, բարկութեամբ և մասամբք նորին, ծուլութեամբ և մասամբք նորին, ագահութեամբ և մասամբք նորին, որկրամոլութեամբ և մասամբք նորին, բղջախոհութեամբ և մասամբք նորին։ Մեղայ Աստուծոյ։

Այլ և մեղայ ամենայն պատուիրանացն Աստուծոյ՝ յանձնառելեացն և հրաժարելեացն, զի ոչ զյանձնա-

ռականն կատարեցի և ոչ ի հրաժարելեացն հեռացայ: Զօրէնս առի և յօրինացն հեղգացայ, ի կարգս քրիստոնէութեան հրաւիրեցայ և գործովս անարժան գտայ, գիտելով զչարն՝ կամաւ կորացայ և ի բարեաց գործոց ես ինձէն հեռացայ. վա՜յ ինձ, վա՜յ ինձ, վա՜յ ինձ: Զո՞րն ասեմ կամ զո՞րն խոստովանիմ, զի անթիւ են յանցանք իմ, անասելի են անօրէնութիւնք իմ, աննեարելի են ցաւք իմ, և անբժշկելի են վէրք իմ: **Մեղայ Աստուծոյ:**

Հա՜յր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան և բարեխօս առ Միածին Որդին Աստուծոյ, զի իշխանութեամբդ, որ տուեալ է քեզ, արձակեսցես զիս ի կապից մեղաց իմոց, աղաչեմ զքեզ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Տերունական աղոթք 4
Հրաժարիմք.....5
Հավատո հանգանակ.....5
Առավոտյան աղոթք 8
Երեխաների աղոթք.....8
Գործ սկսելուց առաջ 9
Դաս սկսելուց առաջ 9
Նեղության ժամին 9
Անհանգստության և վտանգի դեպքում.....10
Հիվանդության ժամանակ 11
Ապավինություն Խաչին 12
Հաց ուտելուց առաջ 13
Ճաշից հետո.....14
Ճանապարհ գնալուց առաջ 14
Եկեղեցի մտնելիս 15
Ուխտավորի աղոթք 16
Ուխտավայրում ասվող աղոթք.....17
Եկեղեցուց դուրս գալիս 18
Քնելուց առաջ 18

Ապաշխարության աղոթք (Սաղմոս 6) 19
Աղոթք ընդդեմ փորձությունների
(Սաղմոս 42).....22
Աղոթք Ս. Գրքի ընթերցումից առաջ.....23
Աղոթք Ս. Հաղորդություն
ստանալուց առաջ և հետո 24
Սաղմոս 22 24
Ձղջում 26

Հրատարակության պատրաստեց
Տ. Ղևոնդ քհն. Մայիլյանը
Սրբագրիչ՝ Ս. Գրիգորյան

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ